

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«Կլիմայի փոփոխության բնագավառում գենդերային վերլուծության և պլանավորման մեթոդաբանական հիմքերը» թեմայով 2019 թվականի հունիսի 18-ից 19-ը «Բեսթ Ռեզորթ Ադվերան» հյուրանոցում անցկացվելիք ուսումնական սեմինարի**

Տարեցտարի մեծանում է գենդերային վերլուծության և գենդերազգային քաղաքականության նկատմամբ ուշադրությունը՝ կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և հարմարվողականության պլանների մշակման առումով: Ավելի է կարևորվում կլիմայի փոփոխության ազդեցությանը ենթարկված ոլորտներում կանանց և տղամարդկանց կարիքների և հնարավորությունների միջև տարբերությունների և նոր իրողությունների հաշվի առնելու պահանջը: Կլիմայի փոփոխության հիմնահարցերի վերաբերյալ կանայք և տղամարդիկ հաճախ տարբեր մտահոգություններ են արտահայտում և առանձնահատուկ՝ իրենց դերերին և հնարավորություններին համահունչ տեսանկյուններ, փորձ և լուծումներ են առաջադրում: Հետևաբար, կլիմայի փոփոխության բնագավառում ազգային ռազմավարությունների, ոլորտների զարգացման պլանների և ՄԱԶԾ ծրագրերի մշակման, կառավարման և իրականացման գործում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը մեծապես կնպաստի այդ ծրագրերի ազդեցության հասցեականության և արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, գենդերային տարբերությունները հասկանալը կարող է օգնել կանանց և տղամարդկանց կոնկրետ կարիքների և նրանց առջև կանգնած իրողությունների վերհանմանը, և ծրագրային միջամտությունները նպատակաուղղել հենց դրանց լուծմանը: Այնուամենայնիվ, թե՛ ազգային և թե՛ ոլորտների պլանավորման մակարդակներում գենդերային հեռանկարների համակարգված կերպով ինտեգրումը դեռևս թերանում է:

Ներկայումս Հայաստանում ՄԱԶԾ կլիմայի փոփոխության (ԿՓ) ծրագիրը մի շարք նախագծեր է իրականացնում, որոնցում ներառված են հստակ հանձնառություններ՝ միջոցառումների և դրանց արդյունքների նախագծման, իրականացման, մոնիտորինգի, գնահատման և հաշվետվայնության կառավարման գործառնություններում գենդերային հարցերը և գենդերային ներգրավվածությունն ապահովելու ուղղությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր ԿՓ նախագծի համար գենդերային գործողությունների պլանի մշակման խիստ պահանջ է դրված, համաձայն որի պարտադիր են գենդերային տարանջատված տվյալների հավաքագրումը (ըստ նպատակահարմարության), գենդերային վերլուծության առկայությունը (համապատասխան ոլորտների համար), ծրագրի միջոցառումների նախագծման և իրականացման գործընթացներում կանանց և՛ տղամարդկանց հավասար ներգրավումը և այլն:

Նման պահանջը կատարելու համար, սակայն, կարողությունների և հմտությունների որոշակի պակաս է նկատվում ինչպես ազգային, այնպես էլ ոլորտային և ծրագրային մակարդակներում: Հայաստանում ԿՓ առնչվող ոլորտներում գենդերային վերլուծության և գենդերային հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրությունների խիստ սակավաթիվ լինելու ներկայիս իրավիճակը հետևանք է նաև «գենդերային հարցեր - կլիմայի փոփոխության ազդեցություն» փոխկապակցված վերլուծության վերաբերյալ մեթոդոլոգիական նոր մոտեցումների և մեթոդական ուղեցույցների ու գործիքների մասին անբավարար իրազեկվածության:

Ուստի, այդ բացը լրացնելու և ՄԱԶԾ ծրագրի անձնակազմին և ազգային շահագրգիռ կողմերին (պաշտոնյաներ, փորձագետներ, քաղաքացիական հասարակության դերակատարներ) վերոնշյալ հարցում աջակցելու նպատակով 2019թ. հուլիսի 18-19 ուսումնական սեմինար է անցկացվելու Աղվերան հյուրանոցում: Դասընթացը կնպաստի ԿՓ նկատմամբ խոցելի ոլորտներում գենդերային վերլուծության և պլանավորման մեթոդաբանության և գործիքների մասին իրազեկվածության բարձրացմանը: Ձեռք բերված կարողությունները կօգնեն վերհանել գենդերային խնդիրները և դրանք ընդգրկել ազգային ռազմավարություններում, ոլորտային ծրագրերում և ԿՓ նախագծերում:

#### Դասընթացի նպատակներն են՝

- բարելավել ԿՓ հետ առնչվող ոլորտներում գենդերային վերլուծության և խոցելիության գնահատման կարողությունները,
- ձեռք բերել վերլուծական և պլանավորման կարողություններ գենդերային հարցերը ազգային և ոլորտային պլաններում և ծրագրերում ընդգրկելու համար,
- ընդլայնել ՄԱԶԾ-ի աշխատակազմի գիտելիքներն ու հմտությունները ԿՓ նախագծերի համար գենդերային գործողությունների պլանների մշակման համար:

#### Ակնկալվող արդյունքներն են՝

- Վերհանել կապերը և փոխկապակցվածությունները գենդերային հիմնահարցերի և կլիմայի փոփոխության բնագավառի և դրա առանձին ոլորտների միջև:
- Որոշակիացնել պաշտոնական և վարչական վիճակագրության հիմնական բացերը և հասցեագրել դրանք վերացնելու անհրաժեշտ քայլերը՝ ԿՓ առնչվող ոլորտներում գենդերային վերլուծությունները կատարելու համար ըստ սեռի տարանջատված տվյալների առումով:
- Համապատասխանեցնել հայաստանյան իրողություններին ԿՓ առնչվող ոլորտներում գենդերային վերլուծության միջազգային մեթոդաբանությունը և գործիքները:
- Ընդհանուր պատկերացում կազմել ԿՓ ոլորտներում և ծրագրերում գենդերազգային պլանավորման և խոցելիության գնահատման վերաբերյալ:

#### Մասնակիցները

1. ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագիր / ծրագրի անձնակազմը և գենդերային թիմը:
2. ՀՀ էկոնոմիկայի, շրջակա միջավայրի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների պաշտոնատար անձինք:
3. ՀՀ վիճակագրական կոմիտեի և վարչական տվյալների շտեմարանների համար պատասխանատու պետական մարմինների ներկայացուցիչներ:
4. Քաղաքացիական հասարակության, ՀԿ-ների ներկայացուցիչներ, և այլն: